ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՀՐԱՄԱՆ

« 24 » հունվար 2024թ. N 28 -Ա

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, 6-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի 2021 թվականի նոյեմբերի 05-ի թիվ 151-Լ հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտե» պետական կառավարչական հիմնարկի կանոնադրության 11.1 կետի 5-րդ ենթակետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 42-րդ կետի պահանջներով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) 2024 թվականի կարիքների համար «ՀՀ ՔԿ ԷԱՃԱՊՁԲ-ՀՊՍ-24/1» ծածկագրով (համակարգչային և պատճենահանման սարքավորումների օժանդակ նյութեր) ընթացակարգի 17-րդ չափաբաժնի մասով հաղթող ճանաչված «Սիգմա էլեկտրոնիքս» ՍՊԸ-ին հայտում առկա անհամապատասխանությունները սահմանված ժամկետում չշտկելու հիմքով ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:
2. Հաստատել ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացվող տեղեկությունները՝ համաձայն կից հավելվածի:
3. Սույն հրամանը սահմանված ժամկետում ուղարկել ՀՀ ֆինանսների նախարարություն և մասնակցին:

X

ԿԱՐԵՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Подписано: MARGARYAN KAREN 2410820077

Կ. Մարգարյան

Հավելված 1
ՀՀ ՔԿ գլխավոր քարտուղարի
«_24_» հունվարի 2024թ.
թիվ 28-Ա հրամանի

Մասնակցի						
անվանումը	ՀՎՀՀ/ֆիզ. անձի դեպքում հանրային ծառայության համարանիշը	գործունեության հասցեն	գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը			ցուցակում ներառելու մասին պատվիրատուի ղեկավարի կայացրած որոշման ամսաթիվը և գնման ընթացակարգի ծածկագիրը
			խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը	խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը	որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից	
«Սիգմա Էլեկտրոնիքս» ՍՊԸ	00521878	ՀՀ, ք.Երևան Ֆրունզե 13	Գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 42-րդ կետի պահանջներով «Սիգմա Էլեկտրոնիքս» ՍՊԸ-ի հայտը 17-րդ չափաբաժնի մասով գնահատել է անբավարար և մերժել:	-	-	24.01.2024թ. ՀՀ ՔԿ ԷԱՃԱՊՁԲ-ՀՊՍ-24/1